ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂԱՇԵՆԻ ՌԱԶՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ

ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ ԱԶՆԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՂԱՇԵՆ - 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
1□ Դպրոցի անձնագիրը.....4
2□ Դպրոցի առաքելությունը.....6
3□ Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմերի բացահայտում, հիմնախնդիրների սահմանում.....7
4. □Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր ----------13
5□ Կառավարման և խորհրդակցական մարմիններ.....14
6□ Բյուջետային հնարավորություններ.....17
7□Աշակերտական համակազմ.....19
8□ Մանկավարժական համակազմ.....20
9□Ուսումնական միջավայր.....22
10□ Ծնողներ, համայնքային մասնակցություն.....24
11□ Դպրոցի համագործակցությունը առանձին կառույցների հետ.....25
12□ Կրթության որակ.....26
13□ Նորարարություն և տեխնոլոգիաներ.....26
14. □ Դպրոցի զարգացման ծրագրի նպատակները.....28
15. □ Դպրոցի զարգացման ուղղությունները և ակնկալվող արդյունքները.....31
16.□ Դպրոցի զարգացման ծրագրի հնարավոր ռիսկերը.....39
17.□ Եզրափակում.....40

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:
/ ՀՀ Սահմանադրություն, հոդված 39/

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելուն և սերունդներին փոխանցելուն:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանման ու զարգացմանը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպման հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է:

ՀՀ Կոտայքի մարզի «Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2021-2026 թ.թ. զարգացման ծրագիրը մշակվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.8-րդ կետի պահանջներին համապատասխան: Ծրագրի հիմքում ընկած են «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թ.թ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը»,ինչպես նաև պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջները: :

Ծրագիրն ուղղված է դպրոցի աստիճանական զարգացման իրականացմանը՝ նախանշելով զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունները:

Ծրագրի առանցքային գաղափարը դպրոցի զարգացման նոր ուղիներ գտնելն է, նպաստավոր կրթական գործընթացի կազմակերպումն է՝ ուղղված սովորողների ճանաչողական գործունեության, ինքնավստահության, որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորմանը, այդ թվում՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու հմտությունների զարգացմանը: Այս ամենը պետք է ծառայի սովորողի սոցիալ - հաղորդակցական հմտությունների և կարողությունների զարգացմանը:

1. ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ

Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցը հիմնվել է 1912 թվականին որպես մեկդասյա դպրոց:

1940 թվականին կառուցվել է դպրոցի երկհարկանի շենքը:

Այսօրվա դպրոցի եռահարկ շենքը շահագործման է հանձնվել 1987-88 ուստարում:

2013 թվականին դպրոցն անվանակոչվել է դպրոցի նախկին տնօրեն Ռազմիկ Ստեփանյանի անունով:

Կոտայքի մարզի «Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը 2003 թվականին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետռեգիստրի տարածքային բաժնում: Դպրոցը գործում է Կոտայքի մարզպետարանի ենթակայության տակ: Դպրոցի կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատվել է 2020 թվականի նոյեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից: :

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2010 թվականի մայիսի 31-ի N 471- Ա/Ք հրամանով տրված լիցենզիաների՝ տարրական ընդհանուր 1-ին աստիճան N 0019, հիմնական ընդհանուր 2-րդ աստիճան՝ N0017, միջնակարգ ընդհանուր 3- րդ աստիճան՝ N 0023, և 2017 թվականի հոկտեմբերի 31-ի 1237- Ա/2 հրամանով՝ նախադպրոցական ավագ տարիքային խումբ(Ա N 0365) տրված լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը.

- ✓ Նախակրթարան՝ 60 սահմանային տեղով
- ✓ տարրական ընդհանուր՝ 260 սահմանային տեղով
- ✓ հիմնական ընդհանուր՝ 270 սահմանային տեղով
- ✓ միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթական գործունեության 150 սահմանային տեղով:

Դպրոցը տիպային շենք է, ունի 2 մասնաշենք:

Դպրոցն ունի 24 դասասենյակ, 1 լաբորատորիա, համակարգչային 2 կաբինետ, 1 գրադարան, 1 մարզադահլիճ՝ հանդերձարաններով (վերջինս հիմնանորոգվել է 2020 թվականին), հանդիսությունների դահլիճ , շախմատի 1 կաբինետ՝ համալրված անհրաժեշտ գույքով , ճաշարան, ուսուցչանոց ,բուժկետ , սանհանգույցներ , ջեռուցման լոկալ համակարգ:

2021 – 2022 ուստարում կոմպլեկտավորվել է 25 դասարան՝ 651 աշակերտ համակազմով, նախակրթարանի 2 խումբ՝ 34 սանով: Դպրոցն ունի 21,5 միավոր վարչական և տեխանձնակազմի հաստիք, մանկավարժական հաստիքների թիվը 37-ն է: 37 ուսուցիչ ունի բարձրագույն մասնագիտական կրթություն: ՈՒսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը 20 դասաժամ է, ուսուցիչ - աշակերտ հարաբերակցությունը՝ 1/17: Առկա է ֆիզկուլտուրայի ուսուցչի 1 թափուր տեղ:

Դպրոցն իրականացնում է ներառական կրթություն, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվը 2021-2022 ուստարում 29-ն է:

Դպրոցն աշխատում է 5-օրյա աշխատանքային շաբաթով:

Ծնողական խորհուրդը բաղկացած է 25 անձից:

Աշակերտական խորհուրդը՝ 70 սովորողից :

Կառավարման խորհուրդը կազմված է 9 անդամից:

Խորհրդակցական մարմիններն ունեն Կանոնադրություն, աշխատանքների պլանավորում և գործում են օրենքով սահմանված իրենց իրավասությունների սահմաններում:

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Առաքելությունը կազմակերպության ցանկալի ապագայի մտապատկերն է:

Վաղվա օրը ձևավորվում է այսօր, դաստիարակված, կրթված սերունդը ձևավորում է առողջ և գիտակից հասարակություն: Ուստի՝ դպրոցի առաքելությունն է կերտել ազգային , մշակութային հարստությունը կրող քաղաքացիներ, ովքեր պատրաստ են առաջնորդել և աշխատել մարդկության զարգացմանը նպաստող ցանկացած ասպարեզում՝ աշակերտների մտավոր, բարոյական, քաղաքացիական և ստեղծագործական ներուժի կատարելագործման միջոցով:

Ժամանակակից աշխարհում գրեթե բոլոր ոլորտներում տեղի են ունենում արմատական փոփոխություններ: Այդ փոփոխությունների առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ գիտության ու տեխնիկայի ընձեռած նոր հնարավորությունները արագորեն ներթափանցում են հասարակական հարաբերությունների, աշխատանքի, գիտելիքների ձևավորման և փոխանցման ոլորտ: Գիտելիքն այսօր այլևս լոկալ բնույթ չի կրում, հեռահաղորդակցման դարաշրջանում աշխարհի որևէ ծայրում ստեղծված գիտելիքն արագորեն տեղայնացվում է աշխարհի մեկ այլ անկյունում: Նման պայմաններում հաջողակ են այն անհատներն ու պետությունները, որոնք առավել արդյունավետ են կարողանում կիրառել նորագույն գործիքները և բաց են շարունակ տեղի ունեցող փոփոխությունների առջև, բայց չեն կորցնում իրենց ինքնությունը: Այս ճանապարհին հաջողության հասնելու հիմնական գրավականը դպրոցական կրթությունն է, որի ձևերն ու բովանդակությունը փոփոխվում են՝ արձագանքելով գիտելիքի փոխանցման և տարածման արագընթաց տեմպերին:

Հայաստանի Հանրապետությունում որակյալ կրթությունը շարունակում է մնալ որպես գերակա խնդիր. այն պետք է լինի անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման , հայ ինքնության պահպանման կարևորագույն երաշխիքներից մեկը: Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների համապատասխան կրթություն ստանալու մատչելիությունը: Դպրոցը յուրաքանչյուր երեխայի համար,

այդ թվում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող , զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով պետք է ապահովի կրթական գործընթացին առավելագույն մասնակցություն և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունք:

Իմ տեսլականն է՝ ունենալ մոտիվացված, հաջողակ, դժվարություններից չերկնչող, մտքի , գիտելիքի զգաթներ նվաճելու պատրաստակամությամբ օժտված ,գիտելիքը կիրառելու կարողություններ ունեցող սերունդ:

4. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ, ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

«Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու նպատակով վերլուծվել է իրավիճակը, բացահայտվել ուժեղ և թույլ կողմերը, վեր են հանվել առկա խնդիրները:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1.

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
ԱՆՁՆԱԿԱԶՄ	
1.Դպրոցի տնօրենությունն ունի դպրոցի ղեկավարման և կառավարման անհրաժեշտ պատրաստվածություն, տիրապետում է դպրոցի ուսումնադաստիարակչական և կառավարմանոլորտների ղեկավարման առանձնահատկություններին, 2. բարձր կարգապահություն և պատաս-խանատվություն, 3. բոլոր օղակների աշխատանքի վերահսկողություն: 4.դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը և դրանց վարումը պատշաճ մակարդակով կատարվում է:	1. Համագործակցությունը համայնքի հետ թույլ է: 2.Կառավարման ժողովրդավարական ձևը երբեմն չի կիրառվում:
➢ Ուսուցչական կազմ և ուսումնաօժանդակ մաս	
1.Մանկավարժները պարտաճանաչ են, բարձր պատասխանատվությամբ են վերաբերվում իրենց աշխատանքին: 2.Ունեն մասնագիտական բարձր մակարդակ և մարդկային անհրաժեշտ որակներ: 3.Ուսուցիչներն ունեն մեթոդական պատրաստվածություն, մանկավարժական հմտություններ,դասապրոցեսը կազմակերպում են աշակերտակենտրոն մոտեցմամբ՝ ներդաշնակորեն համադրելով ավանդական և արդիական մեթոդների	1.Մանկավարժական համակազմում որակավորման տարակարգ ունեցողներ չկան, 2.Նորամուծությունների նկատմամբ մանկավարժներիհետաքրքրության պակաս է նկատվում, 3.Թույլ սովորողների խրախուսման և ակտիվացման արդյունավետ մեթոդներ քիչ են կիրառվում, 4.Ուսուցիչների մի մասը դժվարանում է դասապրոցեսի ընթացքում ներդնել և կիրառել ՏՀՏ գործիքներ:

կիրառումը: 4.Իրատեսորեն կարողանում են գնահատել սովորողների հաջողությունները: 5.ՈՒսուցիչները համագործակցում են միմյանց հետ՝ ընդօրինակելով և տարածելով լավագույն փորձը: 6.ՈՒսումնաօժանդակ կազմը պարտաճանաչ և պատասխանատու ձևով կատարում է իր պարտականությունները:	
➢ Սովորողների ուսումնառություն և այլ գործունեություն	
1.Տարրական և միջին դպրոցում անհարգելի բացակայությունների բացառում:	1.Ավագ դպրոցում անհարգելի բացակայություն է հաճախ գրանցվում: 2. Սովորողները մասնակցում են «Կենգուրու» , «Մեղու» հանրապետական մրցույթներին, առարկայական օլիմպիադաներին, սակայն լավագույն արդյունքներ քչերն են արձանագրում, իսկ հաջողություն գրանցած սովորողների խրախուսում դպրոցում չի կատարվում:

2.Սովորողների կողմից հիմնավոր գիտելիքներ,կարողություններ և հմտություններ ձեռք բերելու ցանկություն, 3.Սովորողներն ակտիվորեն մասնակցում են սպորտային, մշակութային միջոցառումներին: 4.Սովորողները մասնակցում են «Կենգուրու» , «Մեղու» հանրապետական մրցույթներին, առարկայական օլիմպիադաներին: 5.Բուհ-երում սովորելու մեծ ցանկության պահանջ:	3.Ավագ դպրոցում սովորելու նկատմամբ հետաքրքրության պակաս է նկատվում : 4.Սոցիալապես անապահով կամ ծնողի ուշադրությունից դուրս մնացած սովորողների մոտ նկատվում է անտարբերություն ուսման նկատմամբ:
➢ Ծնողների, համայնքի, կառավարման խորհրդի, այլ մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմեր	
1.Դպրոցում գործում են կանոնադրության համաձայն ձևավորված խորհուրդներ՝ կառավարման, մանկավարժական, ծնողական, աշակերտական : 2.Դպրոցում առկա է 7 մեթոդական միավորում, որոնք իրականացնում են պլանավորված աշխատանք, նիստեր գումարում սահմանված ժամկետներում: 3.Դպրոցը համագործակցում է դասղեկների հետ: 4.Դպրոցում գործում է աշակերտական ինքնավարության մարմին: 5.Ծնողները ցուցաբերում են օժանդակություն երեխաների՝ կրթություն ստանալու հանդեպ: 6.Կազմակերպվում են ճանաչողական էքսկուրսիաներ: 7.Կառավարման խորհրդը, խորհրդակցական մարմինները պարտաճանաչ աշխատում են:	1.Խորհրդակցական մարմինների համագործակցային աշխատանքի պակաս է առկա: 2. Բարձր դասարաններում նկատվում է անտարբերություն դպրոցական կյանքի հանդեպ: 3.Աշակերտական խորհուրդը չունի անհրաժեշտ ինքնավարություն, չի համագործակցում հասարակական կազմակերպությունների հետ: 4.Մեթոդմիավորման անդամների համագործակցությունը բարձր մակարդակի հասցնելու անհրաժեշտություն կա: 5.Ծնողական խորհրդի համագործակցությունը համայնքի տարբեր սոցիալական խմբերի հետ թույլ է: 6.Դպրոցը չունի հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդ:

➢ Բյուջե, ֆինանսական միջոցներ	
1Դպրոցի բյուջեի նպատակային օգտագործում, 2.Սովորողների թվաքանակի աճի ապահովում և դրան համապատասխան բյուջետային միջոցների մեծացում: 3.Դրամաշնորհների ձեռքբերում և տարաբնույթ ծրագրերի իրականացում 4.Բարերարներից ֆինանսական աջակցության ստացում և ծրագրերի իրականացում:	1.Արտաբյուջետային միջոցների բացակայություն, 2.Մնողների կողմից ներդրումների բացակայություն:

➢ Գույքային և նյութատեխնիկական ռեսուրսներ	
Վերանորոգված շենքային պայմաններ ա) սանհանգույցներ բ)մարզադահլիճ գ) հանդիսությունների դահլիճ դ) լոկալ ջեռուցման համակարգ 2. Ներառական կրթության իրականացման համար ռեսուրս -սենյակի առկայություն : 3.Մասնագիտական, գեղարվեստական համապատասխան գրականության առկայություն: 4.Պտղատու բույսերի ինտենսիվ այգու առկայություն: 5.Խաղահրապարակի առկայություն:	1. Զգացվում է լաբորատորիաների գույքի, զենական պարագաների, լաբորատոր սարքերի, նյութերի թարմացման անհրաժեշտություն (քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության): 2.Արտակարգ իրավիճակների համար նախատեսված նկուղային հարկ-ապաստարանի նորոգման անհրաժեշտություն, տվյալ տարածքում ինտերնետ կապի, ջրի և այլ անհրաժեշտ պարագաների բացակայություն: 4.Ներառական կրթության իրականացման համար համապատասխան պայմանների բացակայություն (թեքահարթակներ, նյութական բազա): 5.Ճաշարանը հիմնանորոգման խնդիր ունի: 6.Դպրոցն ապահովված է նոթբուկներով, պլանշետներով, սակայն դրանք բավարար չափով չեն կիրառվում ուսուցման գործընթացում: 7.Դպրոցի կոյուղին փոխելու կարիք ունի:
➢ Հնարավորություններ	➢ Վտանգներ
1.Մնողական համայնքի հնարավորությունների օգտագործում:	1.Կրթությանը հատկացվող նյութական և ֆինանսական միջոցների անբավարարություն: 2.Դպրոցի վարկանիշի , կրթության որակի նվազում: 3.Արտագաղթի ուղղակի ազդեցությունը դպրոցի վրա:

ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը՝ դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր, նորմատիվ փաստաթղթեր, կանոնավոր կերպով առկան են և դրանց վարումը իրականացվում է սահմանված կարգով: Ուսումնական հաստատությունը պետք է ունենա նորմատիվ և իրավական համակարգի զարգացման հնարավորություն, իր գործունեության համար անհրաժեշտ իրավական փաստաթղթերի ցանկը և ցանկում նշված բոլոր փաստաթղթերը: Ցանկում նշված փաստաթղթերի օրինակելի տարբերակների հիման վրա պետք է կազմված և սահմանված կարգով հաստատված լինեն իր կառուցվածքին հատուկ փաստաթղթերը: Ուսումնական հաստատությունում պետք է առկա լինեն պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը, և դրանք պետք է վարվեն կարգերի պահանջներին համապատասխան: Ուսումնական հաստատությունը պետք է արդյունավետ օգտագործի գոյություն ունեցող նորմատիվ փաստաթղթերը, դրանց օրինակելի ձևերը, իր իրավասության սահմաններում մշակի հաստատության համար անհրաժեշտ նոր նորմատիվ փաստաթղթեր (ներքին իրավական ակտեր) և դրանք կիրառի աշխատանքի ընթացքում: Այս աշխատանքին մասնակցելու հնարավորություն պետք է ունենան հաստատության բոլոր աշխատակիցները: Այդ փաստաթղթերը պետք է լինեն արդյունավետ, ժամանակակից, չափելի, ապահովեն աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների աճ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարարության կողմից հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը: Այդ փաստաթղթերը լրացնելը դպրոցի առօրյա գործունեության կանոնակարգման համար դեռևս բավարար չէ: Պետք է ունենալ նաև խորհրդակցական մարմնի կանոնադրությունը, որտեղ նկարագրվում են նաև փաստաթղթի վարման գործընթացը և պատասխանատուների աշխատանքը: Օրինակ՝ մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանը վարելու համար դպրոցը մանկավարժական խորհրդի օրինակելի կանոնադրության հիման վրա պետք է մշակի իր

կանոնադրությունը և դրա մեջ սահմանված կարգով վարի մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանը: Եթե դպրոցը համարում է, որ մանկավարժական խորհրդի օրինակելի կանոնադրությունը շատ լավն է, և ոչ մի լրացման կարիք չկա, միևնույն է, պետք է այն տեղայնացնի և սահմանված կարգով հաստատի :

Այսպիսով՝ դպրոցի տնօրենը պետք է վստահ լինի, որ ցանկում թվարկված փաստաթղթերի լրացման կարգերը առկա են, և փաստաթղթերը լրացվում են այդ կարգերի հիման վրա: Ամենօրյա գործունեությունը կանոնակարգելու նպատակով դպրոցն իր իրավասության սահմաններում կարող է մշակել, օգտագործել կանոնակարգող այլ փաստաթղթեր:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Դպրոցում ձևավորված են և արդյունավետ գործում են դպրոցի կառավարման խորհուրդը, մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական և աշակերտական խորհուրդները:

Բոլոր խորհրդակցական մարմինները պետք է ունենան իրենց կանոնադրությունները, որոնք կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Կանոնադրությամբ սահմանվում են տվյալ մարմնի գործունեության ոլորտները և կարգը: Ծնողական խորհուրդը կատարում է իր պարտականությունները համապատասխան լիազորությունների շրջանակներում: Առաջիկայում ակնկալվում է ծնողխորհրդի աշխատանքների առավել ակտիվացում՝ մանկավարժական և աշակերտական խորհուրդների հետ համագործակցելու միջոցով:

Դպրոցի կառավարման խորհուրդն աշխատանքներ է կազմակերպում իր աշխատակարգին համաձայն, պարբերաբար քննարկում է դպրոցի ֆինանսատնտեսական հարցերը, լսում է հաշվետվություններ դպրոցի ուսումնաղաստիարակչական և ֆինանսատնտեսական գործունեության մասին, սահմանում է յուրաքանչյուր տարվա գործունեության ընթացքում առաջացած շահույթի բաշխման ուղղությունները և այլն:

Անհրաժեշտ է ամրապնդել դպրոց – կառավարման խորհուրդ համագործակցությունը՝ առաջարկություններ ներկայացնելով հետևյալ ուղղություններով.

- ✓ նյութատեխնիկական բազայի /լաբորատորիաների/ հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում,
- ✓ դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- ✓ կրթության պետական կառավարման մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- ✓ ճաշարանի վերանորոգման , դպրոցական բակի կանաչապատման և սալիկապատման վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում:

Շատ կարևոր է, որ խորհուրդները ունենան լիարժեք ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները:



Գծապատկեր 1:

Որպես դպրոցի տնօրեն՝ **պետք է կարողանալ** գնահատել և ժամանակին միջոցներ ձեռնարկել խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, ձևական գործընթացները դադարեցնելու համար: Այդ նպատակով անհրաժեշտ է.

1. Մանկավարժական խորհրդի անդամների համար կազմակերպել սեմինարներ՝ նրանց դպրոցի հիմնարար փաստաթղթերին ծանոթացնելու համար:

2. Առարկայական մեթոդական միավորումների նախագահների համար կազմակերպել սեմինարներ «Առարկայական մեթոդական միավորման աշխատանքների պլանավորումը և կազմակերպումը» թեմայով:

3. Զարգացնել առարկայական մեթոդական միավորումների մեթոդական աշխատանքի կազմակերպման գինանոցը՝ գործող փորձի ուսումնասիրության միջոցով:

4.Անհրաժեշտ է ստեղծել հոգաբարձուների խորհուրդ, ձեռք բերված միջոցներն ուղղել շենքային պայմանների բարելավմանը, նյութատեխնիկական բազայի հարստացմանը, լավագույն սովորողների և ուսուցիչների նյութական խրախուսմանը:

5.Ուսումնական գործընթացն ավելի կազմակերպված իրականացնելու և սովորողների մասնագիտական կողմորոշմանը նպաստելու համար անհրաժեշտ է ստեղծել շրջանավարտների խորհուրդ:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դպրոցավարության մյուս կարևոր ուղղությունը նրա բյուջետային հնարավորություններն են: Քանի որ դպրոցը հիմնական և հաճախ միակ ֆինանսավորումը ստանում է պետական բյուջեից, ապա հաջողությունների և դժվարությունների հիմնական պատճառը այդ միջոցների բավարար և անբավարար լինելն է: Դպրոցներն այսօր ֆինանսավորվում են աշակերտների թվով, և դպրոցի բյուջետային միջոցները բավարարում են, եթե աշակերտների թիվը դասարանում բարձր է միջինից: Եթե այդ միջոցներն անբավարար են, ապա դպրոցը բյուջետային միջոցների հետ կապված իր խնդիրները փորձում է լուծել՝ որոշ ուղղություններում քիչ ներդրումներ կատարելով:

Ըստ էության՝ դպրոցի բյուջեի ծախսերն ունեն հետևյալ հիմնական ուղղությունները.

1. Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ
2. Եկամտահարկի վճարներ

Այս ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում, որպես կանոն, չեն փոփոխվում:

3. Գրասենյակային և տնտեսական ծախսեր
4. Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր

Այս ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում սովորաբար նվազեցվում են:

5. Կապի ծառայությունների ծախսեր
6. Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր
7. Կոմունալ ծառայությունների վճարներ

Այս ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում սովորաբար նվազեցվում են խնայողությունների հաշվին:

Ձեռնարկատիրական գործունեությունը դպրոցի համար լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր է: Ստացված շահույթն անհրաժեշտ է օգտագործել դպրոցի կանոնադրական խնդիրների իրագործման նպատակով: Դրա համար հարկ է՝

- ✓ **կազմակերպել համակարգչային ծրագրերի և լեզուների լրացուցիչ ուսուցում**
- ✓ **ուսումնաարտադրական գործունեության ծավալում(սովորողների ջանքերով մշակել պտղատու այգին և ստացված բերքը իրացնել):**

Ոլորտի խնդիրները կարգավորելու նպատակով անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել դպրոցի բյուջետային հատկացումները ավելացնելու և այլ միջոցներ հայթայթելու ուղղությամբ, զարգացնելու տնօրենի և հաշվապահի կարողությունները՝ դպրոցի բյուջեում ֆինանսական մուտքերը և դրանց փոփոխությունները կանխատեսելու, նախահաշիվ կազմելու, ֆինանսական միջոցները նախահաշվին համապատասխան ծախսելու, հաշվետվություններ կազմելու համար: Կարևորում ենք դպրոցի ներգրավումը միջազգային տարաբնույթ ծրագրերում:

Անհրաժեշտ է հնարավորություններ ստեղծել ուսուցիչների աշխատավարձերը բարձրացնելու , պարգևավճարներ տալու համար : Նման մոտեցումը կխթանի մանկավարժների մոտիվացված աշխատանքին:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ

Պետական դպրոցի տնօրենը պարտավոր է տվյալ տարածքում բնակվող երեխաներին (սովորողներին) ծնողի կողմից դիմում ներկայացնելու դեպքում ընդունել դպրոց՝ ապահովելով օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան պայմաններ: Դպրոց ընդունելության ժամանակ սովորողի գիտելիքների ստուգում չի թույլատրվում:

Աշակերտները ոչ միայն մտավոր, այլև սոցիալական և հուզական (էմոցիոնալ) անհատականություններ են, և այս ամենն ազդում է նրանց սովորելու արդյունավետության վրա: Որպեսզի հասկանանք, թե ովքեր են մեր աշակերտները, պետք է հաշվի առնենք՝

1. նախնական գիտելիքները,
2. մտավոր զարգացումը,
3. մշակութային դաստիարակությունը,
4. զարգացվածությունը և զարգանալու հույսերը (սպասելիքները):

Դպրոցի **նպատակներից են՝**

- ✓ **զարգացնել դպրոցի ուսուցիչների կարողությունները սովորողների նախնական գիտելիքները որոշելու, սովորողների տարիքային հոգեբանությունը ճանաչելու, նրանց հետ արդյունավետ աշխատելու համար:**
- ✓ **Սովորողների կարողությունները զարգացնելու , ուսման որակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է կազմակերպել առարկայական միջդպրոցական մրցույթներ, խրախուսել լավագույն արդյունք ցուցաբերած աշակերտներին և նրանց ուսուցիչներին:**
- ✓ **Հաշվի առնելով ԿԱՊԿՈՒ երեխաների կրթական կարիքները՝ սահմանել չափելի, իրատեսական նպատակներ և քայլ առ քայլ հասնել ցանկալի արդյունքի:**
- ✓ **Դպրոցում մեծացնել աշակերտական խորհրդի դերը՝ խթանելով աշակերտական ինքնավարությունը:**

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ

Աշխարհում ոչ մի տեղ չեք գտնի ավելի բարձր առաքինություն,
քան այն օտար մարդու դրսևորած առաքինությունը,
որը վերցնում է ձեր երեխային, դաստիարակում ու կրթում է նրան՝
կատարելով այն աշխատանքը, ինչ ինքներդ շատ հոգվարեպ եք անում:

Մարտի Լյութեր

Ուսուցիչն այն մարդն է, որը կարող է ուրիշին մղել ուսման, որն ընդունակ է սովորողների մեջ սերմանել բարոյական արժեքներ: Լավ ուսուցիչը իր աշխատանքով իրագործում է հայտնի միտքը դաստիարակության մասին. «Առաքինի, խելամիտ և իր գործերը հմտորեն վարող մարդը գերադասելի է այս հատկանիշներից զուրկ գիտնականից:»

Ուսուցիչը պետք է կարողանա զարգացնել սովորողի միտքը, դաստիարակել բնավորությունը, ձևավորել գեղագիտական ճաշակ և վարվելակերպ, այսինքն՝ երեխային նախապատրաստել հասուն կյանքին:

Դասը մանկավարժի մասնագիտական վարպետության հայելին է: Լավ ուսուցչին բնորոշ որակներն են մասնագիտական խորը գիտելիքները, ողջախոհ մոտեցումն իր աշխատանքին, երեխաների նկատմամբ անկեղծ սերը, տարատարիքային հոգեբանության իմացությունը, միտքը մարզող և բնավորությունը ձևավորող օգտակար վարժություններ որոնելու ունակությունը, աշակերտի հանդեպ պատասխանատվության զգացումը:

Մենք պետք է կարողանանք գնահատել մեր մանկավարժական պոտենցիալը, ինչի համար պետք է ունենանք գնահատման չափանիշներ: Մենք կարող ենք ուսուցչին գնահատել՝ ըստ նրա կրթության և փորձառության, ըստ նրա՝ ուսուցման գործընթացում ունեցած հաջողությունների, ըստ դպրոցի զարգացման գործընթացում նրա ունեցած ներդրման: Չափանիշներ կարող են լինել օրինակ՝

1. Ունի բարձրագույն մասնագիտական կրթություն:
2. Ունի աշխատանքի 5 և ավելի տարվա փորձ:
3. Ուսուցման գործընթացում կիրառում է դասավանդման այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս ստանալու բավարար գիտելիքներ, ձեռք բերելու անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:
4. Գիտի գնահատման մեթոդաբանությունը և կարողանում է այն կիրառել:
5. Գիտի առարկայի չափորոշիչները և դասավանդելիս առաջնորդվում է չափորոշիչներով:
6. Իր աշխատանքում պատասխանատու է և պարտաճանաչ, նպաստում է դպրոցի ուսումնական և վարչական աշխատանքների կազմակերպմանը, ուսումնասիրում է գոյություն ունեցող փորձը և տարածում է իրենը:

7. Գիտի տարիքային հոգեբանությունը:

8. Գիտի և հարգում է երեխաների իրավունքները:

9. Պահպանում է մանկավարժական էթիկայի կանոնները:

Կրթության որակի բարելավումը նախ և առաջ ենթադրում է որակյալ ուսուցիչների առկայություն: Կրթության որակի բարձացման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է ուսուցչին:

Դպրոցի մանկավարժական համակազմի որակական բարելավումը համարում ենք դպրոցի ռազմավարություններից մեկը: Այն ենթադրում է ՀՀ կառավարության 14.10.2010 թ. N 1391- Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների կատարում, այսինքն՝

Ա. Ուսումնասիրել, ընդհանարացնել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում:

Բ. Որակավորման տարակարգ չունեցող, սկսնակ ուսուցիչներին նախապատրաստել ատեստավորման:

Գ.Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ:

Դ. Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, մանկավարժական մեթոդական ընթերցումներ:

Ե. Նպաստել ուսուցիչների որակավորման բարձացմանը:

Զ. Կատարելագործել ուսուցիչների աշխատանքը կրթական կայքերի միջոցով (armedu.am, edu.am, aniedu.am, dasaran.am, emis.am և այլն):

Նախատեսում ենք՝

1.աջակցել մանկավարժներին՝ մշակելու և տպագրելու իրենց մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութերը և ստեղծել համապատասխան պայմաններ փորձարարական հետազոտական աշխատանքներն իրականացնելու համար:

2.Նպաստել, որ մեծ թվով ուսուցիչներ տարակարգ ստանան, մասնակցեն տարաբնույթ մրցույթների, ինչպես նաև կամավոր ատեստավորմանը, տնօրենների հավաստագրմանը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ուսումնական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է: Ուսումնական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Այն պայմանավորված է նշված բոլոր ուղղությունների առկայությամբ և փոխկապակցվածությամբ: Դպրոցը կարող է ուժեղ լինել մի ուղղությամբ, բայց այդ ուժը կթուլանա մեկ այլ ուղղության թույլ լինելու պատճառով:

Դպրոցը պետք է ձգտի, որ՝

- դասասենյակները և առարկայական կաբինետները վերանորոգված և կահավորված լինեն նոր գույքով,
- ապահովված լինի դասագրքերով և ուսումնական այլ գրականությամբ, սարքավորումներով և մուլտիմեդիայով,
- դպրոցում ձևավորված լինեն հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին,
- դպրոցում ձևավորված լինի սովորեցնելու և սովորելու ավանդույթ (մշակույթ):

Դպրոցի ուսումնական պլանը դպրոցի հիմնարար փաստաթղթերից է, որը ապահովում է դպրոցի կողմից պետական և հանրային պատվերի կատարումը: Դպրոցի ուսումնական պլանը պետք է կազմվի՝ ըստ սովորողների և ոչ թե ուսուցիչների կարիքների:

Սովորողների նախասիրությունները պետք է արտացոլվեն ուսումնական պլանում և իրականացվեն ուսումնառության ընթացքում: Այս պահանջը դրված է նաև ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի բաշխման հիմքում:

Այս առումով կարևորում ենք ուսումնական պլանի համապատասխանեցումը դպրոցում սովորողների կարիքներին:

Դպրոցը պետք է քայլեր ձեռնարկի սովորողների դաստիարակության համակարգի կատարելագործման ուղղությամբ՝

1. ծնողների ուսուցում կազմակերպելով,
2. առարկայական դասընթացներում հզորացնելով դաստիարակության մասը,
3. արտադասարանական միջոցառումներին դաստիարակչական ուղղվածություններ տալով,
4. ուսման նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելով,
5. ծնող-դպրոց կապը հզորացնելով:

Վերոնշյալ ուղղությունները հաշվի առնելով՝ նպատակ ունենք բարելավելու դպրոցում իրականացվող դաստիարակչական աշխատանքները՝ մշակելով և ներդնելով արդյունավետ մեխանիզմներ, ներմուծելով կրթական արդի ծրագրեր, այդ թվում՝ այլընտրանքային և միջազգային:

- Անհրաժեշտ է սանհանգույցներում տեղադրել չորացնող սարքեր, դիսպենսերներ՝ հեղուկ օճառի համար, խստորեն հետևել սանիտարահիգիենիկ նորմերի պահպանմանը:
- Անհրաժեշտ է վերանորոգել ճաշարանը, սենդամթերքի պահեստը, ապահովել տաք և սառը հոսող ջրով, կահավորել ճաշարանի սեղաններով, աթոռներով, պահարաններով, սառնարանով, օդափոխման համակարգով, օդափոխիչով, սպասքով:
- Անհրաժեշտ է ամրացնել դպրոցական շենքի հիմքը, լուծել կոյուղու հարցը:
- Անհրաժեշտ է դպրոցի նկուղային հարկը վերազինել առաջին անհրաժեշտության իրերով, բժշկական պարագաներով, խմելու ջրով, լապտերներով, դեղորայքով: Առանձնացված սենյակում տեղադրել համակարգիչ, որը միացված կլինի ինտերնետ կապին:
- Անհրաժեշտ է լաբորատորիան, գրադարանը զինել ժամանակակից սարքավորումներով, անհրաժեշտ գրականությամբ:

- Անհրաժեշտ է, որ դպրոցում գործեն ազգային երգ ու պարի կարպետագործության, ասեղնագործության, տիկնիկագործության, փայտամշակման և քանդակագործության, ռոբոտաշինության, տիկնիկային թատերական անվճար խմբակներ, որոնք կնպաստեն սովորողների գեղագիտական , ճանաչողական դաստիարակությանը:

- Անհրաժեշտ է ձևավորել փառքի սրահ:

- Անհրաժեշտ է կատարել դպրոցի բակի կանաչապատման աշխատանքներ՝ ստեղծելով ծաղկանոց – ճեմուղիներ:

ԾՆՈՂՆԵՐ . ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Դպրոցական խորհուրդների ստեղծման գլխավոր նպատակներից մեկը դպրոցի կառավարումը այդ խորհուրդների միջոցով կազմակերպելու անհրաժեշտությունն է, որը ապահովում է համայնքի մասնակցությունը և զարգացնում է դպրոցի ժողովրդավարական կառավարման կազմակերպումը՝ ներառելով ծնողներին և ակնկալելով նրանց ակտիվ մասնակցությունը դպրոցի կառավարման գործընթացին:

Ծնողական խորհուրդի ակտիվ համագործակցության նպատակն է նպաստել դպրոցներում խնդիրների բաց և օբյեկտիվ լուծումներ գտնելուն:

Կրթության որակի արդյունավետության, ինչպես նաև սովորողների շրջանում կարգապահական մի շարք հարցերի քննարկումն ու կազմակերպումը հնարավոր է իրականացնել բացառապես ծնողական համայնքների մասնակցությամբ:

- Դպրոցում պետք է ամրապնդել ուսուցիչ- աշակերտ- ծնող- համայնք- դպրոց կապը:

- Առաջարկում եմ դպրոցում ներդնել վարչական և մանկավարժական աշխատողների գնահատման թերթիկ՝ որի միջոցով աշակերտները և ծնողները կկարողանան օբյեկտիվ գնահատել մանկավարժի գործունեությունը:

ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՆՁԻՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման , սովորողներին ու մանկավարժներին հասարակական կյանքի մեջ ակտիվորեն ներգրավելու, սովորողների մասնագիտական կողմնորոշումն ապահովելու համար անհրաժեշտ է մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ: Ստորև ներկայացված գծապատկերն արտահայտում է այդ համագործակցության տեսլականը:

Գծապատկեր 2:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ

Կրթության որակը կարելի է բարձրացնել՝ բացահայտելով իրավիճակը գնահատելու միջոցով այն փոխելու հնարավորությունները: Անհրաժեշտ է դիտարկել հետևյալ գործոնները.

1. Ուսումնական գործընթացի փաստացի վիճակը.
2. Կրթական գործընթացի կատարողականը.
3. Կրթական գործընթացի արդյունավետությունը.
4. Կրթական գործընթացի որակը կրթական աստիճաններում.
5. Դասերի, ուսումնական միջոցառումների որակը.

Մեր առջև խնդիր ենք դնում բարձրացնելու աշխատանքային կարգապահությունը և ուսուցման որակը:

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Մանկավարժական գիտության, կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն էլ ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների, ուսուցման նոր ձևերի մշակումը: Այսօր արդեն նորություն չեն դասավանդման փոխներգործուն, աշակերտակենտրոն մեթոդները, ուսուցման կազմակերպման տարբեր եղանակները, հեռավար ուսուցման ձևերը:

Դպրոցում այսպիսի փոփոխություններ կատարելը պահանջում է ժամանակ և միջոցների ներդրում: Հնարավոր չէ մեկ սեմինարի կամ վերապատրաստման դասընթացի միջոցով բոլոր ուսուցիչների մոտ ձևավորել ուսուցման ժամանակակից մեթոդների, ՏՀՏ-ների արդյունավետ կիրառման կարողություններ: Ուսուցիչը պետք է ժամանակ ունենա նոր գիտելիքներ ստանալու, դրանք գործածելու, սխալները ուղղելու և մոտեցումները վերանայելու համար: Դպրոցի վարչական կազմն էլ պետք է կարողանա ուսուցչի աշխատանքը վերահսկել, անհրաժեշտ օժանդակություն ցույց տալ և ապահովել նոր ստացած գիտելիքների և հմտությունների կիրառումը:

Մյուս կողմից՝ ցանկալի է, որ դպրոցն ըստ իր զարգացման առաջնահերթությունների՝ ներդնի գիտականորեն հիմնավորված որևէ նոր, զարգացում ապահովող գիտամանկավարժական նորարարություն: Այն

հնարավորություն կտա դպրոցի աշխատակիցներին, աշակերտներին և ծնողներին, ինչպես նաև հիմնադրին, գնահատելու դպրոցի ջանքերը գիտական տեսանկյունից՝ դրանով դպրոցը առանձնացնելով մյուս դպրոցներից, օգտագործելով, տարածելով հաջողված փորձի արդյունքները:

Այս հիմնախնդիրները լուծելու նպատակով հարկ ենք համարում SZS-ների կիրառման միջոցով բարձրացնել ուսուցման արդյունավետությունը, ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի միջոցով ապահովել սովորողների անհատական առաջընթացը:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Դպրոցի զարգացման 2021-2026 թվականների ծրագիրը սահմանում է.

- դպրոցի զարգացման ռազմավարությունը և մարտավարությունը,
- իմ նպատակները և խնդիրները, համադրելով այն առկա մանկավարժական կադրերի ստեղծագործական որոնումների ու հետազոտական ներուժի հետ՝ հասնելու կրթության ցանկալի որակի ու արդյունավետության,
- դպրոցի հրատապ խնդիրների լուծումներ գտնելու մանկավարժական ուղղությունները
- սոցիալ-մշակութային միջավայրում սոցիալական գործընկերության և ծնողների հետ համագործակցության հեռանկարները:

Դպրոցի զարգացման ծրագրի գլխավոր նպատակը բխում է դպրոցի՝ որպես սոցիալական ինստիտուտի, գործունեության հիմնական նպատակից.

- ապահովել սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը:

Այս փուլում իմ առջև դրված են նաև հետևյալ նպատակները և նպատակներից բխող խնդիրները.

Նպատակ 1. Նպաստել դպրոցի հիմնական և ավագ աստիճանների զարգացմանը:

Խնդիր 1. Բարձրացնել սովորողների կրթության որակը և իրականացնել սահմանված չափանիշներով ավագ դպրոցի կարողությունների հզորացում, սովորողների հաճախումների բարելավում:

Խնդիր 2. Զարգացնել սովորողների՝ հետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններն ու կարողություններ:

Նպատակ՝ 2. Մեծացնել նախադպրոցական կրթության ծրագրում երեխաների ընդգրկվածությունը:

Խնդիր 1. Նպաստել և աջակցել երեխաների նախադպրոցական կրթության իրականացման որակի բարելավմանը:

Խնդիր 2. Բարձրացնել նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող մանկավարժների դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման կարողությունների և հմտությունների որակը:

Նպատակ 3. Նպաստել կրթական համակարգում հաղորդակցության արդյունավետության բարձրացմանը ՏՀՏ-ի միջոցով:

Խնդիր 1. Զարգացնել էլեկտրոնային նյութերի օգտագործումն ու գոյություն ունեցող տեղեկատվական համակարգերի կիրառումը:

Խնդիր 2. ՏՀՏ գործիքների օգտագործման ոլորտում թիրախային խմբերի (ուսուցիչներ, վարչական կազմ) հմտությունների բարելավում:

Նպատակ 4. Նպաստել դպրոցի ուսուցիչների համակազմի որակական բարելավանը:

Խնդիր 1. Բարձրացնել ուսուցիչների մասնագիտական աշխատանքաների որակը:

Խնդիր 2. Բարձրացնել ուսուցչի աշխատանքային կարգապահության որակները :

Նպատակ 5. Նպաստել սովորողների մասնագիտական կրթության կողմնորոշման կարողությունների զարգացմանը:

Խնդիր 1. Ուսումնառության, աշխատանքային գործունեության ընթացքում որակական և ստեղծագործական մոտեցումների զարգացում:

Խնդիր 2. Շուկայական հետազոտություններ կատարելու կարողության զարգացում, ժամանակը ճիշտ կառավարելու և իրատեսական պլաններ կազմելու կարողություն:

Այսպիսով՝ իմ առջև դնում եմ նաև հետևյալ նպատակները.

- ✓ մշտապես ապահովել դպրոցում մատուցվող կրթական ծառայությունների որակի շարունակական բարելավումը,
- ✓ բարձրացնել ուսումնական գործընթացի մասնակից շահառու խմբերի (մանկավարժների, սովորողների, ծնողների, համայնքի անդամների) բավարարվածության աստիճանը,
- ✓ ստեղծել դպրոցում նորարարությունների ներդրման մեխանիզմներ,
- ✓ դարձնել դպրոցը համայնքի համար անփոխարինելի կրթամշակութային կենտրոն:

- ✓ Դպրոցի զարգացման ծրագրի իրականացնողներն են.
- ✓ դպրոցի վարչական, սպասարկող և մանկավարժական համակազմերը,
- ✓ դպրոցի խորհուրդների անդամները,
- ✓ ծնողները և համայնքի անդամները:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Մանկավարժական համակազմի որակական բարելավում

Դպրոցի զարգացման ծրագրի գլխավոր նպատակը իրագործելու համար անհրաժեշտ է դպրոցում ձևավորել բանիմաց, ժամանակակից կրթական պահանջներին համընթաց քայլող, պատրաստակամ մանկավարժների հզոր թիմ, որը կկարողանա իրականացնել դպրոցի որդեգրած քաղաքականությունը: Դպրոցի մանկավարժական համակազմի որակը բարելավելու նպատակով սահմանվում են հետևյալ խնդիրները.

- ✓ բարձրացնել մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածությունը,
- ✓ ստեղծել մանկավարժների մասնագիտական շարունակական զարգացման մեխանիզմներ,
- ✓ աջակցություն մանկավարժներին՝ մշակել, ներկայացնել և տպագրել հոդվածներ, իրենց աշխատանքների արդյունքների վերաբերյալ մեթոդական նյութեր,
- ✓ խթանել մանկավարժների հետազոտական աշխատանքների կատարումը,
- ✓ ստեղծել պայմաններ մանկավարժների փորձարարական աշխատանքների իրականացման համար:

Խնդիրների իրականացման մեխանիզմների նկարագրությունը.

- ➢ Դպրոցի ավելի փորձառու մանկավարժների դասավանդման արդյունավետ մեթոդները նորի հետ համադրելով՝ դրանք փոխանցել երիտասարդ մանկավարժներին՝ բաց դասերի, օգտավետ զրույցների, փորձի փոխանակման միջոցով:
- ➢ Օգտվելով ուսուցիչների՝ ներկայումս գործող վերապատրաստման ծրագրերից՝ դպրոցի մանկավարժներին պարբերաբար տեղեկատվություն տալ ժամանակակից մեթոդների վերաբերյալ:

- Ուսուցիչների վերապատրաստումը նպատակաուղղել նաև համակարգչային գիտելիքների և օտար լեզվի իմացության ամրապնդմանը:
- Ստեղծել բարենպաստ պայմաններ դպրոցի մանկավարժների ինքնակրթության համար, ապահովել նրանց ուսումնական ծանրաբեռնվածության մակարդակը:
- Համագործակցել երևանյան դպրոցների և արտասահմանյան կրթական հաստատությունների հետ, ինչը կնպաստի դպրոցի կառավարման և ուսումնական ոլորտներում փորձի փոխանակմանը, ինչպես նաև ուսուցիչների և աշակերտների փոխանակման ծրագրերի իրականացմանը:
- Մշտապես կազմակերպել ուսուցիչների վերապատրաստում ինչպես մանկավարժական բուհերում, այնպես էլ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության կառույցներում: Վերապատրաստումն իրականացնել երկու ուղղությամբ՝ մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների կատարելագործմանը և ատեստավորման նպատակով:
- Պարբերաբար ուսումնասիրել վերապատրաստում անցած ուսուցիչների մանկավարժական աշխատանքի արդյունավետությունը: Ըստ կարգի՝ յուրաքանչյուր տարի ատեստավորման ուղարկել մանկավարժական աշխատողների 20%-ին:
  - Մշտապես վերլուծել դպրոցի մանկավարժական որակական կազմը,
- Մանկավարժական գործունեությունը նպատակաուղղել նրան, որ յուրաքանչյուր սովորող գիտակցի սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների և ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը: Նա պետք է հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, գիտակցի, որ կրթությունը մեծագույն արժեք է, կարևորի բարոյական չափանիշները և գեղագիտական արժեքները, գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, դրսևորի աշխատասիրություն, արժևորի և

գնահատի սեփական և այլոց աշխատանքը, անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը:

Մանկավարժական համակազմի որակական բարելավման ակնկալվող արդյունքներն են՝

- որակավորված և մոտիվացված մանկավարժական կոլեկտիվ,
- աշակերտակենտրոն և արդյունավետ ուսումնական գործընթաց,
- մանկավարժների մեթոդական աշխատանքների պահանջարկի բարձրացում,
- մանկավարժների հետազոտական ակտիվացված գործունեություն:

2. Դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործում և ուսումնական միջավարի բարելավում:

Դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործումն ուղղակիորեն կապված է ուսումնական միջավարի բարելավման գործընթացների հետ: Սովորողների սոցիալականացմանը, նրանց հոգևոր, բարոյական և ֆիզիկական զարգացմանը նպաստելու նպատակով ծրագրում եմ դպրոցում ստեղծել համապատասխան կրթադաստիարակչական միջավայր, որի հիմնական նպատակներն են՝

- սովորողների և ուսուցիչների առողջ կենսագործունեության ապահովում,
- տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում՝ մանկավարժների մասնագիտական զարգացման, նոր մեթոդների կիրառման և ուսումնական գործընթացն ակտիվացնելու նպատակով,
- դասասենյակների, առարկայական կաբինետների և լաբորատորիաների արդիականացումն ու համակարգչային վերազինում:

Խնդիրների իրականացման մեխանիզմների նկարագրությունը.

Դպրոցի գերխնդիրն եմ համարում կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման,

տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացումը: Սովորողների համար ստեղծել տեսական գիտելիքները գործնականում կիրառելու բավարար կարողություններ ու հմտություններ, նրանց տալ մասնագիտական գործունեության համար արդյունավետ կողմնորոշում:

Դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման և ուսումնական միջավարի բարելավման գործընթացների ակնկալվող արդյունքներն են.

- Դպրոցում ուսուցիչների և սովորողների ֆիզիկական և սոցիալ-հոգեբանական առողջ միջավայր,
- Գրավիչ ուսումնական միջավայր,
- Ուսումնական գործընթացում SZS-երի ակտիվ օգտագործում:
- Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների կարժեհամակարգի ձևավորում և զարգացում

Նոր սերնդի բարձրորակ կրթությունը կազմակերպելու նպատակով դպրոցում ապահովել՝

- կրթության կազմակերպման համալիր մոտեցում.
- ժողովրդական ու աշակերտակենտրոն կառավարման մոդել.
- ուսուցման որակի կառավարման նոր համակարգի ներդրում, կրթության բնագավառին անհարիր երևույթների բացառում.

Յուրաքանչյուր առարկայի ուսուցումը համապատասխանեցնել կրթական շուկայի կողմից նոր սերնդին ներկայացվող մրցակցային պահանջներին: Չափազանց կարևոր է երեխայի սոցիալականացման խնդիրը, որին հասնելու համար պետք է սովորողների միջոցով իրականացնել փոքրիկ գիտափորձեր՝ օգնության ձեռք մեկնելով ձախողումների պահին և նշանավորելով երեխայի հաջողությունները: Մանկավարժները պետք է հանդես գան որպես ուղղորդող դերակատարներ՝ կենտրոնում թողնելով երեխային՝ իր առանձնահատկություններով:

Խնդիրների իրականացման մեխանիզմների նկարագրությունը.

Մեծ ուշադրություն պետք է դարձնել սովորողների ստացած գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Դրանք զարգացնելու նպատակով անհրաժեշտ է.

- Սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին՝ զգայության, ընկալման և մտապատկերման, վերլուծելու, մտահանգումներ անելու, ընդհանրացնելու և համադրելու, ինքնուրույն որոշումներ ընդունելու և հիմնավորելու միջոցով:
- Զարգացնել հաղորդակցական և համագործակցային կարողություններն ու հմտությունները (լսել-ընկալել,բանավիճել, տեղին օգտագործել սովորած տերմինները, օգտվել ժամանակակից հաղորդակցման տեխնիկական միջոցներից, սովորել և սովորեցնել, դրսևորել առողջ մրցակցություն, ճանաչել և ընդունել ուրիշների շահերը, լինել բարեկիրթ, հարգել գործընկերոջ իրավունքները):
- Զարգացնել ստեղծագործական և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները (դրսևորել ստեղծագործական երևակայություն, ընկալել և ընդունել նյութական ու հոգևոր նոր արժեքներ, անաչառ գնահատել սեփական ուժերն ու կարողությունները, գիտակցել սեփական գործի կարևորությունը, դրսևորել պարտաճանաչություն, ճիշտ տնօրինել ժամանակը, գնահատել սեփական քայլերը և դրանց հետևանքները):
- Դպրոցի մանկավարժական և ծնողական խորհուրդների հետ համատեղ աշխատանքի միջոցով շրջանավարտին դաստիարակել այնպես, որ նա ճանաչի իր հայրենիքը, լինի հայրենասեր, լիարժեք կերպով տիրապետի Հայաստանի Հանրապետության պետական լեզվին՝ հայերենին:

Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեհամակարգի ձևավորման և զարգացման գործընթացների ակնկալվող արդյունքներն են.

- Հասնել նրան, որ յուրաքանչյուր շրջանավարտ ունենա ազգային մտածողություն, մտահոգվի ազգային և պետական խնդիրների լուծմամբ, ունենա պետական

չափորոշչով սահմանված գիտելիքների համակարգ և դրանք կյանքում ստեղծագործաբար կիրառելու ունակություն:

- Սովորողները պետք է իմանան իրենց իրավունքներն ու պարտականությունները, լինեն օրինապահ, ազնիվ, մարդասեր, ունենան վստահություն սեփական ուժերի հանդեպ, ունակ լինեն սովորելու ողջ կյանքի ընթացքում, առաջնորդվեն «Իմ ուժը իմ հայրենիքն է», «Իմ տունը իմ դպրոցն է» կարգախոսներով:
- Սովորողները պետք է ակտիվ մասնակցեն տարբեր մրցույթներին և օլիմպիադաներին:

Դպրոցի կառավարման, մանկավարժական և աշակերտական խորհրդների դերի բարձրացում:

Դպրոցի գործունեությունը պետք է հենվի ժողովրդավարության և մարդասիրության սկզբունքների վրա: Դպրոցում անհրաժեշտ է արմատապես բարելավել ծնողական և աշակերտական խորհուրդների դերը և նրանց ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում: Առաջին հերթին պետք է հասնել նրան, որ ծնողն ինքը շահագրգռված լինի դպրոցից որակյալ կրթություն ստանալու հարցում: Անհրաժեշտ է ամրապնդել դպրոց-ծնող կապը, նպաստել հասարակության մեջ ուսուցչի բարի համբավի վերականգնմանը: Այդ նպատակին հասնելը ենթադրում է հասարակության լայն զանգվածների հետ ծավալուն աշխատանք, որը պետք է ներառի ծնողների հետ հանդիպումների իրականացում, դպրոց-աշակերտ- ծնող կապը ամրապնդող միջոցառումների անցկացում և այլն: Անհրաժեշտ է ընդլայնել դպրոցի կառավարման խորհրդի լիազորությունները և իրավունքները հետևյալ ուղղություններով.

- դպրոցում նախատեսվող լրացուցիչ ծրագրերի իրականացում, դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում
  - կրթության պետական կառավարման մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում
- դպրոցական շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում

Ծնողական խորհրդին վերապահել հետևյալ լիազորությունները՝

- ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդում
- ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում
- արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին մասնակցություն
- ծնողական և աշակերտական խորհուրդների կապի ամրապնդում դպրոցի կառավարման և մանկավարժական խորհուրդների հետ
- ապահովել երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցում,
- Աջակցել ծնողական խորհրդի աշխատանքի կազմակերպմանը հատկապես սովորողների սոցիալ – կենցաղային վիճակի հաշվառման բնագավառում:
- Պարբերաբար ճշտել դպրոցի ծնողազուրկ, հաշմանդամ, նյութապես անապահով, ծնողական խնամքից զրկված, հաշմանդամ ծնող ունեցող, միայնակ մոր խնամքի տակ գտնվող աշակերտների թիվը:
- Ուշադրության կենտրոնում պահել նաև դասերի չհաճախող և այն աշակերտներին, որոնք ընդգրկված են որոշակի աշխատանքներում:
- Վերլուծության հիման վրա տարածքային կառավարման մարմնի և նրա ներկայացուցիչների միջոցով բարելավել աշակերտների սոցիալական պայմանները:

Բարձրացնել դպրոցի աշակերտական խորհրդի դերը՝ աշակերտական ինքնավարության միջոցով նրան տալով լիազորություններ.

- հնարավորություն տալ աշակերտներին ինքնադրսևորվելու և սեփական կարծիքն ազատ արտահայտելու
- ամրապնդել աշակերտ–ուսուցիչ, աշակեր–ծնող, աշակերտ–համայնք հարաբերությունները
- աշակերտական ինքնավարության միջոցով ապահովել աշակերտների կրթությունը և ինքնակրթությունը, նպաստել նրանց համակողմանի զարգացմանը:

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության բարելավում

2021–2026 թվականների ընթացքում ֆինանսատնտեսական բնագավառում պլանավորում եմ հետևյալ աշխատանքները.

1. Դպրոցական շենքի կոսմետիկ վերանորոգում , գույքի ձեռքբերում.
2. Դպրոցի շրջակայքի բարելավում.մարզահրապարակի բարեկարգում.
3. Ուսումնաղիտողական նյութերի հայթայթում՝ լաբորատորիաները հարստացնելու. համակարգչային տեխնիկայով համալրելու համար.
4. Սենդի մատակարարման վերահսկում.
5. Ֆինանսական միջոցների խիստ վերահսկում՝ գումարներ տնտեսելու նպատակով:

Չեռնարկատիրական գործունեությունը դպրոցի համար լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր է:

Անհրաժեշտ է կազմակերպել նաև շնորհալի աշակերտների ձեռքի աշխատանքների ցուցահանդես–վաճառք, որի հասույթը տրամադրել դպրոցի բարեկարգման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերմանը:

Ստացված շահույթն ուղղել դպրոցի կանոնադրական խնդիրների իրագործմանը՝ դպրոցի կառավարման խորհրդի կողմից հաստատված նախահաշվի հիման վրա:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման արդյունքնում ակնկալվում է ստանալ հետևյալ արդյունքները.

- ✓ ուսուցիչների մասնագիտական և ընդհանուր մշակութաբանական ու մեթոդական պատրաստվածության աճ
- ✓ ուսուցիչների մասնագիտական զարգացման, մոտիվացիայի բարձրացման ճկուն համակարգ և դասավանդման բարելավում
- ✓ կրթության որակի աճ
- ✓ սովորողների շրջանում կրթության վարկանիշի, նրանց կոմպետենցիաների աճ,
- ✓ դպրոցը՝ որպես նորարարությունների ակտիվ ներդրման և համայնքի կրթամշակութային կենտրոնի դերի աճ:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերն են.

- ➢ երկրում սոցիալ-քաղաքական և տնտեսական իրավիճակը և անկայուն վիճակի վտանգը, որը հանգեցնում է նախատեսված նախագծերի իրականացմանը,
- ➢ սովորողների թվի նվազումը, որը կբերի ֆինանսավորման նվազմանը,
- ➢ պայմանավորվածությունների խախտումը, չկատարումը
- ➢ իրականությունից կտրվելու, կյանքի հետ կապ չունեցող երազանքների վտանգը,
- ➢ ծրագրի վերածումը լավ գործի, հանուն որի չարժե ծրագիր ստեղծել,
- ➢ ռեսուրս-ծախս ծրագրի վտանգը (արդյունքը չի արդարացնի ծախսված միջոցները),
- ➢ ընտրված միջոցի ոչ կոնկրետությունը և այլն:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Մեծապես կարևորելով պատասխանատվության աստիճանը՝ տնօրեն ընտրվելու դեպքում ես տեղ եմ տալու խորհրդակցական մարմինների հետ ավելի սերտ աշխատանքին՝ առաջնորդվելով դպրոցի կառավարման ժողովրդավարական ոճով և բարձրացնելու կառավարման արդյունավետությունը:

Ես խորապես համոզված եմ, որ տնօրենը ժամանակակից ուսումնական հաստատությունում ուսուցիչների ղեկավարն է, թիմի առաջնորդ, գաղափարակիրը, միևնույն ժամանակ աշակերտների ու ծնողների գործընկերն է, ում հետ նրանք կարող են խոսել իրենց ներկայի և ապագայի, ծրագրերի ու խնդիրների մասին, ով կարող է նրանց աջակցել ոչ միայն ուսումնական գործընթացում, այլև նրանց հետագա կյանքում: